ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 05-ին կնքված N «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-18/1.2» պայմանագրում 2018 թվականի սեպտեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կողմից առաջարկվել է գրապահարանների մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով, քանի որ այն տարածքներում, որտեղ գրապահարանները պետք է տեղադրվեին, դեռ ընթանում են շինարարական աշխատանքներ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը ավելացվել է 30 օրացուցային օրով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 8.5 և 8.6 կետերը:

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

05.05.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-18/1.2 պայմանագրի

Ք. Երևան <<28>> սեպտեմբերի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<Օլանդա>> ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Վարոսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով կողմերի միջև 05.05.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ԳԿ-18/1.2 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին Պայմանագրի Հավելված N1 հանդիսացող տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով՝ մինչև 28.10.2018թ.:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	<<Օլանդա >> ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ՀՀ, Շիրակի մարզ, Մարալիկ, Գագարինի 29
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«ԱՇԻԲ» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 2478918854740000
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 05528443
ՀՎՀՀ 02631263	էլ. Հասցեն hasmikjan61@mail.ru
	հեռ. 094504066
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ